DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ

BISHOP KHAJAG BARSAMIAN, PRIMATE

Թիւ 834
Ապրիլ 1, 1992

Հոգեշնորհ
Տ. Օշական Վրդ. Կիւլկիւլեան
Հովիւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Նախագահ Ծխական Խորհուրդի
Ռիչմընտ.

Սիրելի Հայր Օշական,

Ստացած ենք համայնքիդ Անդամական Ժողովի տեղեկագիրները եւ Փետրուար 19, 1992 թուակիր ձեր նամակը, որով կը տեղեկացնէք թէ համայնքիդ Տարեկան Անդամական Ժողովը գումարուած է Փետրուար 2, 1992-ին, եւ այդ առթիւ ընտրուած են Ծխական Խորհուրդին երկու անդամներ: Կու տաք քուէարկութեանց արդիւնքը եւ կը խնդրէք նորընտիր անդամներու վաւերացման պաշտօնագիրը:

Այս գրութեամբ կը վաւերացնենք Ծխական Խորհուրդի հետեւեալ անդամներու ընտրութիւնը.

Տօրիըն Պարսամեան
Գարըլ Կարապետեան

Բարի եղէք շուտով Առաջնորդարան ղրկել Ծխական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամներուն անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Այս առթիւ ձեր ուշադրութեան կը յանձնենք որ Ծխական Ժողովի դիւանի ընտրութիւնը պէտք է կատարուի գաղտնի քուէարկութեամբ եւ երկպատիկ ցանկի մը վրայէն, ինչպէս նաեւ Ծխական Խորհուրդի տեղեկագիրը պտք է ստորագրուի Ատենադպիրին կողմէ եւս:

Կ'օրհնենք Ծխական Խորհուրդի նոր կազմը: Մեր մաղթանքն է որ Տէրը Իր հովանիին ներքեւ պահէ համայնքիդ անդամները եւ բոլորիդ եկեղեցանուէր աշխատանքներուն յաջողութիւն պարգեւէ:

Սիրոյ ողջունիւ

Խաժակ Եպս. Պարսամեան
Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, NY 10016-4885 TELEPHONE 212.686.0710 FAX 212.779.3558